

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ








ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճգմաչյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սարգսյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		12.02.18
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 212.6 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 1.4%-ով (2.9 մլրդ. ՀՀ դրամով):

Այդ թվում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխառությունները աճել են 13.6%-ով (14.3 մլրդ. ՀՀ դրամով), Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ նվազել 10.7%-ով (3.5 մլրդ. ՀՀ դրամով), Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներն աճել են 5.4%-ով (111.9 մլն. ՀՀ դրամով), Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվները՝ 6.9%-ով (365.9 մլն. ՀՀ դրամով) և Այլ ակտիվները՝ կրճատվել 9.5%-ով (498.1 մլն. ՀՀ դրամով):

2017 թվականի չորրորդ եռամսյակի ակտիվների աճը նախորդ եռամսյակի նկատմամբ կազմել է 5.1% (10.3 մլրդ. ՀՀ դրամ): Վերջինս հիմնականում պայմանավորված է Կանխիկ դրամական միջոցների ու ՀՀ կենտրոնական բանկում մնացորդների գծով 51% (12.9 մլրդ. ՀՀ դրամ) և Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխառությունների գծով 3.6% (4.2 մլրդ. ՀՀ դրամ) աճով: Միևնույն ժամանակ նվազում է գրանցվել Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների՝ 33.1% (6.7 մլրդ. ՀՀ դրամ) և Այլ ակտիվների գծով՝ 27.5% (1.8 մլրդ. ՀՀ դրամ):

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ապահովվել է հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխառությունների բնականոն աճ՝ մնացորդները կազմելով 119.2 մլրդ. ՀՀ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է 13.6% (14.3 մլրդ. ՀՀ դրամ), իսկ 30.09.2017թ.-ի համեմատ՝ 3.6% (4.2 մլրդ. ՀՀ դրամ):

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և վերջիններիս մեծամասնությունը դասակարգված է որպես ստանդարտ վարկ, ինչը վկայում է Բանկում վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 29.3 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 10.7%-ով (3.5 մլրդ. ՀՀ դրամով), իսկ 30.09.2017թ.-ի համեմատ աճել են 5.4%-ով (1.5 մլրդ. ՀՀ դրամով):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 32.8 մլրդ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 87.3 մլրդ. ՀՀ դրամի դիմաց:

Արտարժույթային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 297 մլն. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 34.5 մլրդ. ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 129 մլն. եվրո:

Վերը նշված արտարժույթային գործառնություններից հաշվետու եռամսյակում ստացված զուտ եկամուտը կազմել է 243 մլն. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 191.1 մլն. ՀՀ դրամի դիմաց:

Պարտավորություններ

2017թ.-ի երրորդ եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 177.3 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել են 2.8%-ով (5.1 մլրդ. ՀՀ դրամով), իսկ 30.09.2017թ.-ի համեմատ աճել են՝ 6.0%-ով (10.1 մլրդ. ՀՀ դրամով):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պարտավորությունների կրճատումը պայմանավորված է Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 18.6% (19.9 մլրդ. ՀՀ դրամ) և Այլ պարտավորությունների՝ 88.4% (14.4 մլրդ. ՀՀ դրամ) նվազմամբ: Միևնույն ժամանակ, աճ է գրանցվել Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 44.2% (24.4 մլրդ. ՀՀ դրամ), Բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 129.0% (4.9 մլրդ. ՀՀ դրամ) և Վճարվելիք գումարների գծով՝ 62.8% (37.7 մլն. ՀՀ դրամ) աճով:

30.09.2017թ.-ի համեմատ, պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 14.6% (10.1 մլրդ. ՀՀ դրամ) և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի 131.5% (5 մլրդ. ՀՀ դրամ) աճով: 5.9%-ով (5.5 մլրդ. ՀՀ դրամով) նվազել են Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների նվազումը մեծապես պայմանավորված է Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի և դրսից ներգրավված միջոցների աճով:

Ընդհանուր կապիտալ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 35.3 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 6.5%-ով (2.2 մլրդ. ՀՀ դրամով), իսկ 30.09.2017թ. համեմատ՝ 0.7%-ով (261.1 մլն. ՀՀ դրամով):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է Գլխավոր պահուստի 11.1%-ով (300 մլն. ՀՀ դրամով), Վերագնահատման պահուստների 10.7% (92.3 մլն. ՀՀ դրամով) և Զբաղիված շահույթի 13.8% (1.8 մլրդ. ՀՀ դրամ) աճով:

Նախորդ եռամսյակի համեմատ Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է Զբաղիված շահույթի 2.3% (323.4 մլն. ՀՀ դրամ) աճով: Վերագնահատման պահուստները կրճատվել են 6.1%-ով (62.3 մլն. ՀՀ դրամով):

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 45.3%-ով (1.3 մլրդ. ՀՀ դրամով)՝ կազմելով 4.1 մլրդ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը բաժին է ընկնում Հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից (3.2 մլրդ. ՀՀ դրամ կամ 79.7%), Պարտքային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտներին (590.5 մլն. ՀՀ դրամ կամ 14.6%), Ռեպո պայմանագրերից ստացված տոկոսային եկամուտներին (137.8 մլն. ՀՀ դրամ կամ 3.4%) ու Բանկի ընթացիկ հաշիվներից, Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից ստացված տոկոսային եկամուտներին (59.3 մլն. ՀՀ դրամ կամ 1.5%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարներից ստացված զուտ եկամուտները կազմել են 62.1 մլն. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 59.5%-ով (91.4 մլն. ՀՀ դրամով):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2017 թվականի չորրորդ եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

	2017 թվականի 4-րդ եռամսյակ	2016 թվականի 4-րդ եռամսյակ <i>հազ. ՀՀ դրամ</i>
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4,057,829	2,793,217
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,946,151)	(1,444,429)
Զուտ տոկոսային եկամուտ	2,111,678	1,348,788
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	411,722	296,157
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(349,664)	(142,748)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	62,058	153,409
Եկամուտ շահաբաժիններից	-	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	576,917	455,660
Այլ գործառնական եկամուտ	151,541	137,959
Գործառնական եկամուտներ	728,458	593,619
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	460,122	(342,359)
Ընդհանուր վարչական ծախսեր	(1,444,610)	(941,881)
Այլ գործառնական ծախսեր	(1,286,689)	(187,644)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	631,017	623,932
Շահութահարկի գծով ծախս	(307,610)	(267,285)
Շահույթ հարկումից հետո	323,407	356,647

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 1.9 մլրդ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 34.7%-ով (501.7 մլն. ՀՀ դրամով): Տոկոսային ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց կատարված տոկոսային ծախսերին (794.8 մլն. ՀՀ դրամ կամ 40.8%), Բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի դիմաց կատարված ծախսերին (1 մլրդ. ՀՀ դրամ կամ 53.0%) և Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերին (112.1 մլն. ՀՀ դրամ կամ 5.8%):

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն ավելացել են 53.4%-ով (502.7 մլն. ՀՀ դրամով)՝ կազմելով 1.4 մլրդ. ՀՀ դրամ:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 323.4 մլն. ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 356.6 մլն. ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները՝ բերված տարեկանի, կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 3.7%

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.6%:

Հաշվետու եռամսյակի 323.4 մլն. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 184 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 267 ՀՀ դրամի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալները, որոնք իրենց արդյունքներով արտացոլվում են Կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, կազմել են 62.1 մլն. ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի՝ 153.4 մլն. ՀՀ դրամի համեմատ: Վճարահաշվարկային գործառնությունների ծառայություններից է կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 323.4 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 4.3 մլրդ. ՀՀ դրամ:

2017թ.-ի չորրորդ եռամսյակի ընթացքում Բանկի հաճախորդների քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 2,605-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ 27,474-ով և կազմել 116,599:

Վճարահաշվարկային գործառնություններ

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 228.9 մլրդ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 151.7 մլրդ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվը կրճատվել է 1.6%-ով (2,425 հատով)՝ կազմելով 148,310 հատ, որից 92,388-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 53,912-ը՝ MasterCard և Visa Card միջազգային պլաստիկ քարտերին, 2,010-ը՝ Diners Club միջազգային պլաստիկ քարտերին:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

	Հազ. ՀՀ դրամ	
Ցուցանիշի անվանումը	2017 թվականի 4-րդ եռամսյակ	2016 թվականի 4-րդ եռամսյակ
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	323,407	356,647
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,115,473	28,832,551
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	0.92	1.24
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	323,407	356,647
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	211,149,714	146,513,385
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.15	0.24
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	323,407	356,647
Գործառնական եկամուտ	2,902,194	2,095,816
Զուտ շահույթի մարժա (NPM), %	11.14	17.0
Գործառնական եկամուտ	2,902,194	2,095,816
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	211,149,714	146,513,385
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	1.37	1.43
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	211,149,714	146,513,385
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,115,473	28,832,551
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM),%	6.01	5.08
Զուտ տոկոսային եկամուտ	2,111,678	1,348,788
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	154,283,584	99,675,988
Զուտ տոկոսային մարժա (NIM),%	1.37	1.35

Տոկոսային եկամուտ	4,057,829	2,793,217
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	154,283,584	99,675,988
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	2.63	2.80
Տոկոսային ծախսեր	1,946,151	1,444,429
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	170,555,674	134,961,426
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	1.14	1.07
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	323,407	356,647
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	1,760,731	1,337,077
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.184	0.267
Սպրեդ, %	1.49	1.73

Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը
հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով, ուստի Բանկը 2018թ.-ի համար կարևորում է հետևյալ առաջնահերթությունները.

1. Բանկի գործունեության արդյունավետության բարձրացում
2. Թվային բանկային ծառայությունների զարգացում
3. Ներդրումային բանկային ծառայությունների զարգացում
4. Կենտրոնացում ոչ տոկոսային եկամուտ ապահովող ծառայությունների վրա
5. Վաճառքի մեխանիզմների վերանայում և զարգացում
6. Անձնակազմի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում
7. Մասնաճյուղերի արդիականացում և գործունեության արդյունավետության բարձրացում:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«31» դեկտեմբերի 2017թ.


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	4,057,829	16,102,578	2,793,217	10,797,453
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,946,151)	(8,386,763)	(1,444,429)	(5,745,735)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		2,111,678	7,715,815	1,348,788	5,051,718
		-		-	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	411,722	1,397,071	296,157	1,049,828
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(349,664)	(916,775)	(142,748)	(558,934)
Մտացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		62,058	480,296	153,409	490,894
		-		-	
Եկամուտ շահաբաժիններից		-	-	-	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	576,917	1,631,779	455,660	1,009,937
Այլ գործառնական եկամուտներ	6	151,541	763,939	137,959	478,849
Գործառնական եկամուտներ		728,458	2,395,718	593,619	1,488,786
Զուտ մասհանումներ ակտիվների					
հնարավոր կորուստների պահուստներին	7	460,122	(704,196)	(342,359)	(1,265,281)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,444,610)	(4,933,023)	(941,881)	(3,605,941)
Այլ գործառնական ծախսեր	9	(1,286,689)	(2,332,129)	(187,644)	(779,367)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10	-	-	-	
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		631,017	2,622,481	623,932	1,380,809
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(307,610)	(562,731)	(267,285)	(291,334)
Ժամանակաշրջանի շահույթ		323,407	2,059,750	356,647	1,089,475
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ
Բանկի վարչության նախագահ _____ Յ.ՎԱՍԻՍԻԱՆ



հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68 -Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրահանգով

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 բ)

«31» դեկտեմբերի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ	Նախորդ ժամանակաշրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		(77,876)	115,383	225,812	1,336,927
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		-	-	-	-
վերագնահատումներ		(77,876)	115,384	225,812	1,336,926
Դրամական հոսքերի հեջավորում		-	-	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		-	-	-	-
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		15,575	(23,077)	(45,162)	(267,385)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		(62,301)	92,307	180,650	1,069,541
Համապարփակ ֆինանսական արդյունք		261,106	2,152,057	537,297	2,159,016
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ
Գլխավոր հաշվապահ _____ Յ.ԿԱՆՍՅԱՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական վիճակի մասին (ծև թիվ7)

«31» դեկտեմբերի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա- գրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (չստուգված)
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	37,881,596	48,720,936
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորներ			
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	13,622,367	16,498,015
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	15		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	119,167,143	104,879,951
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	29,328,229	32,846,022
1.7	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19		
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		2,180,351	2,068,421
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	5,689,627	5,323,683
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	3	7,274	-
1.12	Այլ ակտիվներ	21	4,725,241	5,223,296
	Ընդամենը՝ ակտիվներ		212,601,828	215,560,324
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	79,419,651	55,040,689
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	87,189,692	107,121,932
2.3	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	8,733,830	3,812,886
2.4	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	25	-	-
2.5	Վճարվելիք գումարներ	26	97,697	59,998
2.6	Հետաձգված հարկային պարտավորություններ	3	-	150,946
2.7	Պահուստներ	30		-
2.8	Այլ պարտավորություններ	27	1,878,289	16,243,261
	Ընդամենը՝ պարտավորություններ		177,319,159	182,429,712
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	8,803,655	8,803,655
3.2	Էմիսիոն եկամուտ	29	8,031,745	8,031,745
3.3	Պահուստներ՝			
3.3.1	Գլխավոր պահուստ	30	3,000,000	2,700,000
3.3.2	Վերագնահատման պահուստներ		958,930	866,623
3.4	Զբաղիված շահույթ (վնաս)		14,488,339	12,728,589
3.5	Կապիտալի այլ տարրեր	29		
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		35,282,669	33,130,612
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		212,601,828	215,560,324

Քանիք՝ միլիոն դրամով

Ա.ՕՄԻՊԵԱ

02500518

ARARATBANK

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ Կոմիտասի պողոտա, 19

Ֆ.ՈՒՆԱՅԱՆ

Ենթահավելված 8
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ


Հավելված 8
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻԶԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ծև թիվ 8)

«31» դեկտեմբերի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից	Վաճառքի համար նախատեսված ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ մթացիկ ակտիվների վերագնահատումների ցուցումներ	Զբաղիված շահույթ/վնաս	Միջանկյալ շահութաբաժիններ	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված կապիտալ	Զուտ գումարը											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)														
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2016թ. (ստուգված)	6,387,505	-	6,387,505	1,947,880	1,500,000	-	(202,918)	-	-	12,839,114	-	22,471,581	-	22,471,581
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության սխախտումների ընթացքում պարտումը և էական սխառման ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2. Վերահաշվարկված մնացորդը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ թաժնետերեր (թաժնեմասերի) ձեռք առ թվում	2,416,150	-	2,416,150	6,083,865	-	-	-	-	-	-	-	8,500,015	-	8,500,015
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	2,416,150	-	2,416,150	6,083,865	-	-	-	-	-	-	-	8,500,015	-	8,500,015
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և ճշգրտումներից համակարգ բաժնետերեր (թաժնեմասերի, սխառման)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4. Համապարհակ եկամուտ	-	-	-	-	-	-	1,069,541	-	-	1,089,475	-	2,159,016	-	2,159,016
4.1. Ընթացիկ ժամականաշրջանի շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	1,089,475	-	1,089,475	-	1,089,475
4.2. Դուրսդր ընկերության չբաշխված շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5. Շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5.1. Շահութաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	1,200,000	-	-	-	-	(1,200,000)	-	-	-	-
7.1. Սահմանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	1,200,000	-	-	-	-	(1,200,000)	-	-	-	-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.3. Էմիսիոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2016թ. (ստուգված)	8,803,655	-	8,803,655	8,031,745	2,700,000	-	866,623	-	-	12,728,589	-	33,130,612	-	33,130,612
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2017թ. (ստուգված)	8,803,655	-	8,803,655	8,031,745	2,700,000	-	866,623	-	-	12,728,589	-	33,130,612	-	33,130,612
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության սխախտումների ընթացքում պարտումը և էական սխառման ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10. Վերահաշվարկված մնացորդը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ թաժնետերեր (թաժնեմասերի) ձեռք առ թվում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և ճշգրտումներից համակարգ բաժնետերեր (թաժնեմասերի, սխառման)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12. Այլ համապարհակ եկամուտ	-	-	-	-	-	-	92,307	-	-	2,059,750	-	2,152,057	-	2,152,057
13. Շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	300,000	-	-	-	-	(300,000)	-	-	-	-
15.1. Սահմանումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	300,000	-	-	-	-	(300,000)	-	-	-	-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.3. Էմիսիոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31 դեկտեմբերի 2017թ. (չստուգված)	8,803,655	-	8,803,655	8,031,745	3,000,000	-	958,930	-	-	14,488,339	-	35,282,669	-	35,282,669



Ենթահավելված 9.1.

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 9.1.

ապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ծև թիվ 9 ա)

«31» դեկտեմբերի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
1	2	3
Շահույթ հարկումից առաջ	1,425,968	2,622,481
Գործառնական գործունեություն	-	-
Հիմնական միջոցների ամորտիզացիա	384,631	612,070
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	45,086	955,896
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	(49,790,427)	(13,279,699)
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)	66,777,292	(34,256,226)
Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	18,842,550	(43,345,478)
Ներդրումային գործունեություն		
Կապիտալ ծախսումներ	(4,730,186)	(1,078,946)
Ներդրումներ	(18,003,761)	3,543,037
Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	-	-
Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(22,733,947)	2,464,091
Ֆինանսական գործունեություն		
Փոխառությունների և այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում)	7,131,047	28,645,253
Վճարված դիվիդենդներ	-	-
Բաժնետոմսերի վաճառք (հետգնում)	8,500,015	-
Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)	-	(519,352)
Ֆինանսական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	15,631,062	28,125,901
Փոխարժեքի տատանումների ազդեցությունը	203,020	(314,210)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	51,114,122	38,044,426



(Եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
10/1/2017 թ-ից 31/12/17 թ.
(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծություն	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	8,803,655	50,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	32,868,267	30,000,000	խախտում առկա չէ
Ն ₁ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	15.43%	min12%	խախտում առկա չէ
Ն ₂ ¹ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	32.02%	min15%	խախտում առկա չէ
Ն ₂ ¹¹ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	14.49%	min4%	խախտում առկա չէ
Ն ₂ ² Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	136.37%	min60%	խախտում առկա չէ
Ն ₂ ²¹ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	75.78%	min10%	խախտում առկա չէ
Ն ₃ ¹ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	16.27%	max20%	խախտում առկա չէ
Ն ₃ ² Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	118.12%	max500%	խախտում առկա չէ
Ն ₄ ¹ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	4.51%	max5%	խախտում առկա չէ
Ն ₄ ² Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	10.55%	max20%	խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը` ՀՀ դրամով,	2.64%	min2%	խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով,	18.00%	min18%	խախտում առկա չէ
Եվրոյով	18.00%	min18%	խախտում առկա չէ
Արտաժութային դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	1.92%	max10%	խախտում առկա չէ
Ըստ առանձին արտաժութների յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը` ԱՄՆ դոլարով,	1.19%	max7%	խախտում առկա չէ
Եվրոյով,	0.00%	max7%	խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով,	0.00%	max7%	խախտում առկա չէ
Այլ արտարժույթ	0.73%	max7%	խախտում առկա չէ

